Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 10 - Ա որոշման

ԾՐԱԳԻՐ

«ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Սևանա լիճ նետված և լճի հատակում գտնվող ձկնորսական ցանցերի, թակարդների և աղբի հավաքում և վերամշակում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի Գլոբալ Էկոլոգիական Հիմնադրամի Փոքր Դրամաշնորհների Ծրագիր
4.	Ծրագիրը կատարողը	«Արմդայվինգ սուզորդների ակումբ» ՀԿ ,ՀՎՀՀ- 01267295, քաղ. Երևան, Շերամի փողոց, շենք 105, բնակարան 79
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ Գեղարքունիքի մարզ, Սևանա լիճ, բնապահպանական
6.	Ծրագրի բյուջեն	23,778,500 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետություն
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2021 թ-ի դեկտեմբերի 12-ից մինչև 2023 թ-ի դեկտեմբերի 11-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1. Սևանա լճի հատակի սկանավորում 20-40 մետր խորությամբ, աղբի հայտնաբերման և մաքրման աշխատանքների իրականացում: Նախատեսվում է իրականացնել 2021 թ-ի դեկտեմբերի 12-ից մինչև 2023 թ-ի նոյեմբերի 30-ը Սարքավորումների ներմուծման և տեղափոխման համար՝ 9,732,883դրամ: 2. Լրացուցիչ աշխատանքների և այլ ծախսերի իրականացման համար շուրջ 14,045,617 դրամ: Նախատեսվում է իրականացնել ծրագրի ամբողջ ընթացքում:

10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1. Նավակով քարշակվող պատճենավորող հիդրոլոկատորի ներմուծում՝ շուրջ 2,592,508 դրամ: 2. Ստորջրյա հեռակառավարվող ապարատի ներմուծում՝ շուրջ 7,140,375 դրամ: 3. Սեմինար ծրագրի մասնակիցների հետ 5 անգամ՝ ընդամենը 500000 դրամ: 4. Սևանի հատակից դուրս բերված ցանցերի վերամշակման ուսուցում տեղացիներին 20 անգամ՝ ընդամենը 4500000 դրամ: 5. Գործուղում 2500000 դրամ 6. Մոտորանավակով ծառայության ստացում 6545617 դրամ
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չկան
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցել «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	1. ՀՀ կառավարության 2003 թ-ի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ: 2. ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի Գլոբալ Էկոլոգիական Հիմնադրամի Փոքր Դրամաշնորհների Ծրագրին և «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

03.02.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ